

ՀԱՅԸՆԵԿԸՆ ԿԵՐՆՔԸ

ՀԱՅՏՈՒՆԵՎՈՐ ՎԵՐՆՔԸ

Հայ Հետաճիւղի մէջ ամենեց շարդուածը Հայրն էր Քանի որ չափահաս որդիք չունի, նրա մեռ քին է ընտանիքի գեկը և նրա անմիջական իրաւատութեան տակ է գտնուած ընտանիքի ներքին և արտաքին կառավարութիւնը: Երեւանաբաղ Հետգնեւտէ աղբ իշխանութիւնը քանի գնում թուշանում է և կամայ կամայ որդուն անցնում: Նոյն կերպ են վարում և մօր հետ: քանի որ երեխաները փոքր են, նրան ամենքը խում են, իսկ որդայ չափահաս դաւնարայ լեռայ, նրա խորգանքն էլ Հետըդ-Հէտէ պակասում է: Նրա խօսքին մօտիկ են տալիս միայն Հարս-Ներն և տան փոքրերը: Եւս իսկ մշտ պրտաւորուած լինում:

Տան մեծի առաջին և գլխաւոր բանը աշխատանքը կարգադրելն է ամենայ մէջ. նա է ամեն որ նշանակում միւս որդայ գործը, որոշելով ամեն մէկի աշխատանքն և չափը, իւրաքանչիւրի ոյթի և խելքի Համեմատ: Եւ որդայ քանի չի մարդը:

Դիւզի երկրագործական աշխատանքը կապում է ընտանիքի անդամներին միմեանց հետ: Մեծ, փոքր, կին, տղա-արգ՝ ամենքը աշխատում են. աշխատում են շատ անգամ իւրար հետ և միշտ էլ իւրար Համար. մէկը ամենքի Համար, ամենքը մէկի Համար: Պէտք է աշխատել, ուրիշ մօր չկայ. աղդպէս է կարգը. աղդպէս է Հրամայել տան մեծը, եթէ նրա խելքը չը կորէր, չէր ասիլ, որ ասել է՝ ասել է թէ պէտք է կատարել, փոքր երեխան էլ զիտէ, Հառկացել է, որ մինչև չը բանեն, չը ցանեն, Հայ չի լինիլ, քաղցած կը մնան. ուսկի ու փողի երես նրանք ճրտեղից կը տեսնեն: Եթէ փող էլ զաւրիս է բերքի ծախսելուց, դա էլ միմիայն Հօր մեռքն է մտում: քանի որ տան մեծը նա է, ուրիշ ոչ ոք չի կարող խառնուել նրա Հաշիւների մէջ: Կտոր է, պարտք է, տան պակասներն են, քոլորը նա է Հաշում և մտածում: Քիչ անգամ է կնոջը զիմում և Հարցնում, տի էլ ասելի կտոր առած ժամանակ. միշտ էլ աշխատելով չափաւորել նրա պահանջները և մի քանի բան պակասելի նրա անանքերից: Այդ է պատճառը, որ կինն աշխատում է իր Համար ցոյ փող մեռք զոյն

կամ պարապ ժամանակին ուրիշի մաս օրավարձ բանելով, կամ տան աւելցած իւրից, հաւից ու ձուից ծախելով: Ծախածի փողը անպատճառ կ'նոշն է պատկանում: Սակարարք իւր ծախած ժամանակ, կանայք պահանջում են, որ զինք իրանց ձեռքը տրուի և ոչ իրանց մարդոց: Եթէ մարդն իմանար կամ չէր թողնել որ տան իւրը ծախուէր, քանի որ իրանց էլ հազիւ է հերիք գալիս և կամ կը պահանջէր, որ փողը իրան տրուէր: Դրա համար էլ շատ անգամ կանայք իրանց տղամարդկանցից ծածուկ են ծախում իւրրու իւրին: Եւ որչա՞նչ պատճառներ որ մնայ:

Աշխատանքի անընդունակ անգամին ոչ ոք չի սիրում նրան ծագրում, առում են: Իրանց սիրելի անձի երկար ժամանակով հիւանդանայր նոյն իսկ ստելի է թւում նրանց, ուր մնայ առողջ, բայց ծոյց ու անընդունակ մարդու գոյութիւնը: Եւ պէտք է ասել, որ խեղացիւ ծոյցեր, աշխատանքի անընդունակ մարդիկ շատ հազուադիւր են համշէնցիների մէջ: Նրանք բոլորն էլ լափից դուրս բանուկ, աշխատասէր մարդէկ են: Ֆաւէք նրանց մի կտոր հող, ուր էլ լինին, նրանք իրանց հարպիկ ձեռքերի ու սակուն ոյժի շնորհով ամեն տեղ գլխները կը պահեն, քաղցած չեն մնալ:

Հօր մահից թուոյ բնտանիքի կառավարութեան զեկը անցնում է որդիներից նրան, որ ասելի ընդունակ է ու խելք, որ ասելի գիրք ունի հասարակութեան մէջ: Միմիայն աշխատանքը բաւական չէ բնտանիքը կառավարելու համար. խելքն ասելի է հարկաւոր: Նրան է խնամում աշխատանքի ընդհանուր հսկողութիւնը և բնտանիքի շահերի պաշտպանութիւնը գրաւ չըջանում: Եթէ խելք չունենայ, բեղու չունենայ, տանն էլ, դուրսն էլ նրան մտիկ տեղ չի լինիլ: Եղ է պատճառը, որ լեզուանի, խելքով տղան նոյն իսկ Հօր կենդանութեան ժամանակ շատ անգամ տան ներկայացուցիչն է համարում հասարակութեան մէջ: Ֆանք թէեւ նա ամենքից քիչ է բանում և ամենքից ասելի նոր ու մաքուր է հազում, որովհետեւ չի նամէջ է գուրս գալիս, բայց էլի տանը նրան պատում են, ամենքից ասելի նրա խոսքին են լսում: Եւ այդ նրա համար, որ ամենքն էլ գիտեն, որ միայն աշխատանքը ոյժն է, ձեռ-

քի հասցը կը խնն գիւշի գործղներն ու ցեցերը, եթէ քամակին օգնող չը լինի, եթէ իրանց շահերին պաշտպան չունենան:

Եզգակցութիւն ու խնամութիւն:

Տառին ասում են	— — —	ձօժ.
Մօրը	— — —	ձէ"ր կամ ձ.ր. իսկ կանչելիս՝ էձա.
Հօրը	— — —	Հէ"ր կամ Հ.ր. իսկ կանչելիս՝ էքա.
Հօրեղբորը	— — —	Հօրփէ"ր կամ Հօղբէր.
Հօրեղբոր կնոջը	— — —	ձամէ"ր կամ Հօրօփեկին.
Մօրեղբորը	— — —	քեռի.
Մօրեղբոր կնոջը	— — —	քեռեկին.
Մօզաբորդը	— — —	մօզքուր.
Հօբաբորդը	— — —	Հօբքուր.
Եղբորը	— — —	ախպէ"ր կամ ուղղակի անունն են տալիս.
Քրոջը	— — —	քուրիկս կամ ուղղակի անունն են տալիս.
Կնքաւորը	— — —	կնքեալ.
Կնքամօրը	— — —	կնքեկին.
Կնքա՛ւօր մօրը	— — —	կնքամօք.
Կնքաւօր քրոջը	— — —	կնքաք.ւք.

Խնամոնց համար՝ տներոջ՝ ու զգրանցի մասին խօսելիս փեսան քշում է նրանց մօր զապը՝ կամ միջը մօճը՝ ասելով. կանչելիս էլ՝ սովորաբար նրանց պապ՝ կամ՝ ձօժն է ասում. աներորդուն ուղղակի անունն է՝ տալիս, իսկ նրա՝ մասին՝ խօսելիս՝ Թուրքերէն բառով է քշում: Իսկ քեռակապին՝ խօսելիս էլ, կանչելիս էլ միշտ Թուրքերէն բառով է քշում: Իսկ ութբշները այդ բոլոր համար ուղղակի Թուրքերէն բառեր են գործածում: զրանց հայերէն անուններ չը կան. (աներ-Բաբայուզ, զոքանչ-Մնայուզ, աներորդի—Կախիչ, քեռակալ-քաջընալ): Հայերէն բառեր պահել են՝ օփտուր, օփաքէ"ր, տէ"քը, ներ, տալ. քենի-անուններում:

Կներ իր մարդու մասին խօսելիս՝ օփաքոջ ասաջ՝ նրա համար՝ «տալաջ» է ասում, «տալի մօտ» — «ախպէ"րդ», «տէգրիմոջ մօտ» — «տէքրլաջ», իր ծնողների ասաջ՝ — «բնիշտ"դ», «սաարների մօտ» — «ինքը, միտնէք, միր տօնը մեծը, միք կորիճը, միք տղայ Հէ"րը (կամ երեխի անունը տալով):

Յգտակարը իր կնոջ մասին խօսելիս՝ ծնողների մօտ ասում է՝ նրա համար՝ — «հայր», անժրանց մօտ՝ — «աբլիկ», «սաարների մօտ» — «միք տօնափօնը, միք բնտանիքը»: Երբեմն էլ քշում է՝ նրան ծագումով, այս ինչի աղբիւր կամ Թուր, իրանց հայրական ազգով (միք Պար-

վաշտը, մի Գուգին, մի Գիւտչիւր...), Ընուն տալ ոչ իրար մօտ, ոչ էլ ուրիշների մօտ բարձրակին չէ ընդունուած իրար կանչելիս՝ ափորաբար առած են—«քաւ և կամ թէ չէ, եթէ մի քիչ հեռու են, նախապէս իրար «ու» են ձայն տալիս ու ապա աւելցնում. «քաւ, լսե՛ս կու տէ՛» (լսում ես)։

Ասփոքարաւ Համշէնցի Հայերի մօտ բազմանդամ ընտանիքներ չըկան։ Հազաւայտ են նրանց մօտ այնպիսի ընտանիքներ, ուր մի քանի եղբայրներ երկար ժամանակ միասին մի-և-նոյն բարկի տակ ապրէին։

Եղբայրներից ամեն մէկը Համարեա պատկուելուն պէս՝ բաժնուժ, իր Համար ջոկ առնէ և կազմում. Գնողները մնում են փոքր որդու մօտ։ Քա նրանց մօտ այնպիսի մի բնական սովորութիւն է դարձել, որ որդու բաժնուելու մօտին նախապէս ոչ կուի է լինում և ոչ էլ խօսակցութիւն։ Որդիք բաժնուժ, Հեռանում են ուղղակի Հէնց այնպէս, որովհետեւ կարգն այնպէս է, էլ բարձարութիւն չը կայ մնալու, այնպէս՝ ինչպէս նոր կամ մեղուի ձազը անմիջապէս թաղնում է Հին փեթակը և նոր տեղ տեղափոխում։ Բայրաւիին աչքպէս է և նրանց մօտ։ Չը նախել որ նրանք անխտիր երկրագործութիւնով են պարտքում և այդ պարտքմունքն էլ պահանջում է շատ աշխատուոր մեռքերի միութիւն, բայց և այնպէս՝ նրանք գերադասում են մեռ-մեռակ, իրանց Համար ազատ-անկախ, քչւորով Հողը մշակել, լարքաշութիւն քաշել, անոք, անոգնական մնալ, քան թէ շատուորով շատ գործ անել, բայց շարունակ տրտմանքներ ու անբաւականութիւն անմնայ իրար դէմ։

Բաժնուելու պատճառ ոչ այնքան տեղրկնիկներն ու Հարսներն են, կամ սկեռարի բռնութիւններ, ինչքան Հէնց իրանց տղամարդիանց կամքն ու զգացմունքները։ Ընկի իրանք որդիքն են ուղում Հեռանալ Հօրեռական օջախից, օր առաջ ազատուել Հօր իշխանութիւնից ու Հօհարութիւնից, իրանց աշխատանքի կատարեալ տէրը լինել։ Ճիշտ է՝ նրանց մօտ ընտանեկան բռնութիւններ չկան, բայց գիւղական նախապետականութիւնը դեռ ևս ընդունում է այնպիսի կարգեր, որոնք

կապում, կաշկանդում են ջաշկել օրգու ազատութիւնը: Այսպէս նա պարտական է Հօր-մօր և առհասարակ տան մեծերի առաջ չը ծխել, ամօթ է. նրանց բռնած զօրծում չը խառնուել, նըրանց սխալը չօղորդել, պատշաճ խոնարհութիւն ցոյց տալ, մեծից առաջ խաբ շտեղ և աղջն և աղջն: Բայց ամենից տեղի նըրան վշտացնում է աջն բանը, որ այնքան աշխատելուց խոտո՞ գրպանը մի կապէկ չի մտնում, որ ինքն էլ երբեմն-երբեմն, քաղաք գնացած ժամանակ՝ սիրան ուզած բանն առնի, կամ հագնելիք կամ ուտելիք: Քանի որ փոքր է, ջաշկել է, Հօր իշխանութեան տակ է, գրամական ոչ մի հաշուի մէջ նրան չեն խառնում, նրա մեռքը ոչինչ չեն տալիս. բայցը Հօրը մեռքն է գնում. նա է որոշում իր խելքով, թէ ում ինչ է հարկաւոր առնել: Էլ ինչի մնայ ինքը, քանի որ տանը իրան բանի տեղ գնող չըկայ: Ինքն էլ վեր է կենում, գնում է, իր համար քոկ ապրում: Մենակ հօ ինքը չէ այսպէս. աւրիշներն էլ այդպէս են աքել. ոչ ոք գրա համար ոչ նեղացել է, ոչ էլ մի բան տեղ. երեւ կարգն այդպէս է. ինչի ինքն էլ չը գնայ: Եւ գնում է, նայն իսկ հաշտ կերպով, առանց դաժմադուի, գրեւ զօրս շարունակելով իր կայր հարեմական օշախի Հեռ, շատ անգամ օգնութեան հասնելով Հօրը նեղը մնացած ժամանակ, նայնպէս իր Հերթին վախելով Հօրանց օգնութիւնը իր նեղ ժամանակը:

Տէգրկներկների, Հարսների ու սկեսրի անհամութիւնները երկրորդական, երրորդական պատճառ կարող են լինել. զրանց մասին զանգաստներ շատ քիչ են լինում: Արդէն բանը գեւ զրանց չը հասած՝ բաժանումը լինում է, էլ երբ պէտք է ժամանակ գտնին իրար հեռ ընկնելու:

Նոյնպէս շատ աղջիկ բերելը տնեցիներից ոչ ոքի համար տխրութիւն չէ, բայց և այնպէս հաստատապէս կարելի է ասել, որ նրանց մէջ ոչ մի գէպք պատահած չի լինիլ, որ զրա համար հարսին սկսած լինին ծուռ աչքով նայիլ և կամ տնից զօրս արած լինին. այդ տեսակ բան նրանց մէջ երբեք չէ պատահել: Ճիշտ է՝ աղջկայ ծնունդը նրանց մօտ այնպէս աւրախութիւնով չէ ընդունում, ինչպէս տղինը, բայց և այնպէս՝

աղջիկը ոչ մի կերպ բռն չի լինում ծնողների համար: Նրան էլ այնպես են պահում ու հաղցնում, ինչպես տղին. ոչ մի զարգարանք, ոչ ոսկի, ոչ արծաթ չեն կախում նրա վրայ մինչև մարդու գնալը, եթէ չը հաշուենք կոպեկանոց պղնձե ապարանքաններն ու հասարակ օրերն ու շրջանները: Պատկի ժամանակ եթէ մի զարգարանք տալիս են, այն էլ տղի տիրոջ կողմից է բնծայ գալիս, ինչպես և հարսի պատկի բայր հաղուստեղենն ու նրա տան ուտելիքի պատրաստութիւնը:

Վաղ նշանել, արսպես կոչուած՝ օրօրոցախաղի սովորութիւն ընդարձկն չկայ նրանց մօտ, ոչ էլ զրա պատճառով խնամանց բանախ հիւրասիրելն ու շխնդառ ուղարկելը: Հովառակը, ինչպես տեսանք, աղջկայ տէրը տւելի նազ ու թուզ է ծախում, լիզուն երկար է պահում, ասելի մեծ արտահայտիւններ է վայելում, քան տղի տէրը, որ հաղի հազ, հաղար նագով ու փողով կարգահում է աղջկայ տիրոջ հաճութիւնն բառանալ:

Հարս ու սկեսրի խաղաղութիւններն ստանձին անհամութիւնների պատճառ չեն լինում: Առասպելական հռչակ ասացած սկեսրական բռնութիւններ դրանց մօտ լուած չեն: Ճիշտ է՝ Հարսը սովորաբար ակնածութիւն ու պատշաճ խոնարհութիւն է ցոյց տալիս սկեսուրին, բայց այդ խոնարհութիւնը երբէք ստրկութեան չի հասնում. ոչ էլ սկեսուրն է արգելախ պահանջներն անում: Կինը տւելի կախում ունի մարդոց, քան սկեսուրից. սկեսուրը երկրորդական գեր է կատարում: Սկզբներում՝ երբ Հարսը նոր եկած է, տղան ջաշէլ է, ամօթ է նրան խառնուել կնոջ գործերում. Հարսը սկեսրի հսկողութեան տակ է. նա է նրան տան բաները սովորեցնում, տեղ զրկում, սովորեցնում տնեցոց ու օտար մարդկանց բնգունելու և վարուելու կարգը, ում հետ և երբ խօսելու և չը խօսելու ժամանակը և այլն: Հարսի չը խօսքանութիւնը կարն է տեսում, հաղիս մի քանի շարաթ. այնուհետև կատարեալ ազատութիւն է վայելում խօսելու ամենքի հետ, լինի նա տան մարդ թէ օտար. երբան էլ միշտ բայց, առանց որեւէ կապի ու քննիկալի: Միմիայն Հարսնիքից յետոյ առաջի շարաթն է, որ գլխին երկար

քոզ գցած, տանն է մտնւմ. դրանից յետոյ բաց երեսով, ար-
ձակ-Համարձակ ամեն տեղ էլ կարող է գնալ: Կինը ընդհանրապէս Համշէնցիների մօտ վայելում է կա-
տարեալ ազատութիւն. մանկութիւնից նրան տղերանց Հետ
Համար ազատութիւն է տրւում. նրանց Հետ միասին մեծա-
նում ազատ ու մաքուր բնութեան ծայում, ամեն աշխատան-
քին նրանց Հետ մասնակից միջեւ մարդու գնալը: Մարդու
գնալուց յետոյ էլ նա չի կտրում իր կապը բնութիւնից. մար-
դու անբաժան մասնակիցն է՝ արտի ու դաշտի գործին: Փե-
տասն ու մանկադր ձեռքին՝ նա բանում է արտում ոչ միայն
իր մարդու, այլ և դրանք բանած մարդկանց Հետ, առանց քա-
շուելու և ամաչելու: Նրանց Հետ խօսում է, ծիծաղում, Հե-
քիաթներ պատմում, արտի ու բերքի մասին դատադոթիւններ
անում: Եւ արդ վարժունքի Համար նրան ոչ ոք չի դատադար-
տիլ, գործն այնպէս է, որ պատմաբոլը միշտ ամեն տեղ չի կա-
րող Համեղ. մէկը պէտք է՝ որ բանւորների Հետ լինի, նրանց
Հետ բանի, նրանց վրայ Հսկի, թէ չէ նրանք էլ չեն բանիլ,
դպրը կը մնայ: Դրա Համար ոչ սկեսուրը կը նեղանայ, ոչ էլ
մարդը մի բան կասի: Նեղանան, նեղանան՝ շատ-շատ մի քա-
նի Հայհոսանքներ կը թափեն, բանը ծնծի երբէք չի Հասնիլ:
Չատ Հազիւ պատահած կը լինի, որ մարդը իր կնոջը ծնծած
լինի, իսկ սկեսրի կողմից Հարսին ծնծելը Հօ իմացում չէ:
Նոյն իսկ ամենամեծ պատմաբի Համար, աբիշների Հետ Ծա-
ծուի կանքի Համար անգամ մարդը քաշում է իր կնոջ վրայ
ձեռք բարձրացնելու. շատ-շատ մի քանի Հայհոսանք ասի, կը
թողնի, Համարում լինելով, որ ինչքան կողիւ վարուի, այն-
քան կը Հեռացնի նրան իրանից, միւս կողմից Հասկացած լի-
նելով, որ օրէնքը իրաւունք չի ապրիւ մարդուն կնոջը ծնծելու:

Աշխատանքն ընտանիքի անդամների մէջ արապէս է բա-
ժնուած. Հերիք, տափան ու պատ քաշելը, լուծ ու սնիլ բա-
նեցնելը — անպարման տղամարդու գործեր են. մնացած բոլոր
երկրադործական-տնտեսական գործերում անբաժան մասնակ-
ցում է կինը: Չատ անային գործերը՝ կարը, լուացքը, մանեղն
ու գգելը, կերակար եփելն ու Հաց թխելը, կթելն ու խնային,

ջուր բերելը, տանը սրբելն ու մաքրելը, բաժուրիս աշխատանքը — միմիայն կանանց բանն է, աղամարդը չի խառնում: Տղամարդը բաժուրքն հերկում է, արարք քաշում է, մնացածը թողնում կնոջը: Կինն է փերում, ցանում, փնդում, տնկում, խափրը մաքրում, քաղում, չորացնում, հնդացում պահում:

— Կերակուրն ու հացը սովորաբար կանանցից նա է պատրաստում, որը որ տանն է մնում, լինի նա հարս թե սկեսուր: Եթե հարսը փոքր, ծնկեր երեխայ է աճեցնում, տանն է մընում: այդ բաներն էլ նա է տեսնում, իսկ երեխայ չունեցողը արտն է գնում, կերակուրն ու հաց պատրաստելը սկեսրին թողնում: Սովորաբար՝ որովհետև բանելն աւելի գիտար է, գրա համար տանը թանկու պատաններն են մնում, իսկ հարսներն ա ջաշէշները գնում են արտը: Ցանը մնացողը՝ կերակուրը պատրաստելուց և հացը տքարից՝ կամ փռից հանելուց յետոյ, դարտում է տկալաթը և տանում արար՝ աշխատատեղերին: Ով որ կերակրի ու հացի նայում է, ջուրն էլ ինքն է բերում, իսկ իրիկունները սովորաբար ջուրը հարսներն ու աղջիկներքն են բերում: Ցանը աւելին ու մաքրելն էլ տանը մնացողին է մնում, թէև այդ էլ արիշ Ժամանակ հարսներն ու աղջիկներքն են աւնում: Կալը կթելը, խնոցին հարելն ու խմոր հանցելը աւելի հարսների գործ է. աղամարդկանց զլուխն ու ոտները լուանայր նոյնպէս. բայց եթէ տանը մի քանի հարս կայ, ամենից փոքրն է աւնում այս վերջինը: Բուրդ գզելը, բոկն ու բառարին՝ մանկը աւելի պատանների բան է. իսկ կանեփից թել քաշելուն ու խփր կապելուն ամենքն էլ մասնակցում են: Կարը լուացքն ու զլաթն գործելը աւելի ջաշէշներն են տնում, երբեմն էլ անասուից փաթա նրանք են շալափով բերում, իսկ գուլպա գործելն ու տրեխ շինելը, նոյնպէս՝ կանեփից թել ու թել հիւսելը աղամարդկանց բանն է:

Վաղ առաւօտեան, զեռ լոյսն ու մութը չը բացուած, ամենքը վեր են կենում տեղերից երեսները լուանում և ապա անմիջապէս շնորհի (աղօթք) կանգնում: Մեծ, փոքր, կին, աղամարդ — ամենքը աղօթում են: Եթէ մէջները շաիրացու — կարգացող ունին, մայնով շնունքս են անում: Ելի շնունքս են

անում երեկոթան, երբ գործից գալիս են, և մէկ անգամ էլ՝ պառկելուց առաջ: Ճաշից ու ընթրիքից առաջ ու վերջը երկար ազդեցիկ ապօրոյթիւն չունին. սովորաբար միայն երեւոյնքն են խաշակնքում: Հացի նստելուց առաջ մեռքերը լուսնում են, իսկ ուտելը վերջացնելուց թառոյ՝ մեռքերի հետ բերանն էլ են լուսնում: Հացի ժամանակ ամենքը միասին են նստում, կին թէ տղամարդ: Հիւր ունեցած ժամանակը՝ երբեմն միասին, երբեմն էլ՝ ջոկ: Եթէ հիւրը տղամարդ է, տան մեծի հետ են նստեցնում, կամ ջոկ տալիս, իսկ երբ կինմարդ է լինում, տան կանանց հետ է ուտում: Սեղանը զնկու ժամանակ սովորաբար հարկ եղած ծառայութիւնը տան փոքր հարսի վրայ է. նա է սպասաւորում սեղանին:

Բ Ը Ր Ո Յ Ը Կ Ե Ն Ո Ւ Թ Ւ Ւ Ն.

Կովկասեան տփերը գաղթելուց թառոյ, Համշէնցիների ինչպէս հայրենական կեանքի շատ կողմերի, նոյնպէս և բարք ու վարքի մէջ հետզհետէ փոփոխութիւններ են մտել: Հայրենական պարզ ու նահապետական կեանքի հետ տեղ-տեղ նկատւում են նրանց մէջ ապականութիւն ու անբարոյականութիւն, մանաւանդ Չէրնոօթի վիճակում, ուր շրջապատող սուս կազակ զիւղացիների բնառնական բարոյի բարքերի ապականութեան շնորհով նահապետական հալը կորցրել է իր բարքերի վազմի մաքրութիւնը: Այստեղ բարքերի ապականութիւնը ծաղրայեղ առտիճանին է հասել. ապօրինի կապեր և օջախի պատուի խախտումը, ասեւանդութիւններ ու կանանց փախցնելը շատ տարածուած երեւոյթներ են նրանց մօտ: Միւս տեղերում, ճիշտ է՝ այդ երեւոյթներն այնքան մեծ չափով չեն կրկնում, բայց չի կարելի ասել, թէ բոլորովին չը կան: Ամեն տեղ նրանց գիւղերում պատահում են այդ տեսակ ապօրինի կապեր, թէեւ, ի հարկէ, ծածուկ, ոչ բացարձակ կերպով: Պրանց պատճառը ոչ միայն իրանց հայրենակիցների փառակիչ օրինակն է և շրջապատող տարմի ապականող ազդեցութիւնը, այլ գլխաւորապէս

իրանց պարագմունքը, թութունի մշակութունը: Այդ բերքի մշակութունը որովհետև սաստիկ մեծ ծառայ է տապել նրանց մաս, ստիպում է ահագին թափ թանուորներ թափել զորքի տաք ժամանակ: Թանուորների ամենամեծ մասը կովկասեան ափերի Հիւսիսում, Չէրեմօսի կողմերում, կազմում են ռուս աղջիկներ, որանք սպականութեան ամենազլխաւոր աղբիւրն են: Նրանք զայիս են տառնաւոր, Հարիւրաւոր խմբերով, նոտամ փեր են կենում Հայ տղերանց հետ, նրանց հետ ողջ օրը երգով ու կատակներով անցկացնում: Ինչ խօսք որ աղջիկների վրայ ոչ մի Հսկողութիւն չը կայ. նրանք իրանց զլխաւ են, մի է նրանց մաս նշանակութիւն տալիս ալլ տեսակ բաներին:

Էլի ալլ թութունի պատնասով չէ, որ Հաղարաւոր Հայ պանդուխտներ Անատոլիայի Հայրենական ափերից զայիս են կովկասեան ափերը, իրանց Հայրենակիցների մաս, ծառայի կամ թութունից մի մաս ստանալու պայմանով մտնում նրանց մաս, նրանց հետ միասին նոտամ, վերկենում, բանում ու պաւկում: Հասկանալի է, որ այդքան պանդուխտ բաղձութեան ալլալէս մասիկ կերպով տներ լցուելը ստանց Հետեւանքի չի կարող անցնել: Սրերով, ամբաներով և նայն իսկ տարիներով միասին ու միասեղ ապրելն ու կենակցելը՝ այսպէս թէ ախպէս՝ պատնաս է լինում ապրիւնի կապերի, մանաւանդ որ նրանց մեծ մասը ջահէլ մարզիկ են, մեծ մասը կ'առչ ու երեխանց տէր, որանց ամբաներով ու տարիներով Հայրենի երկրում երեսի վրայ թողած, եկել ընկել են այս տեղերը, որ մի քիչ փող աշխատեն, գնան իրանց երկրում Հարալ Հայ ուտեն, թուրքական անթիւ ու աճող տուրքերը տան, իրանց բանեցրած եղն ու կալը պարաքի Համար գրուելուց ազատեն: Էլի ալլ թութունն է պատնասը, որ շատերը նրանցից իրանց աշխատատիրութեան ու ընդունակութեան շնորհով զգալի բարեկեցութեան Հատնելով, միջոց է տալիս նրանց կանանց պնտուելու ավորականից դուրս շուաղ կերպով, այնպէս որ վերջին տարիներս նրանց կանանց մէջ, մանաւանդ ուր թութունի մշակութիւնը մեծ չափերի է Հատել, ինչպէս օրինակ Սուխումի շրջանում, չափից դուրս տալածուած է պնտտիրութեան ախար. մէկը միւսին գերազան-

ցիլ է ուզում: Հարտի համար, ասե՛ք, ոչինչ. նրա ձեռքը կը հասնի. բայց ի՞նչ կանէ խեղճ-լուսնորդ: Այ, նրանց բանն է գժուար: Աղքատի կի՛նն էլ չի ուզիլ թա մնալ իր հարևանից. և բաւական է տեսնի՛ որ մարդը չի կարողանում իր ճաշակին ա պահանջներին գոհացում տալ, կամաց-կամաց կոխի ուրիշ ճանապարհ բռնել... Ահամայ նրա մարդու բեղուն էլ կը կապուի: Ի՞նչ կարող է անել. շատ էլ յանդիմանի, նա էլ է դանաւ, որ հարևանի կի՛նն իր կնոջից լաւ է գուրս գալիս. ի՛նչ տրամ: Անբժամ կի՛նը որ իրան չի հասկանում: Ոչ, շատ լաւ հասկանում է, բայց չի գգում, չի խղճում նրան. զուով հօ չի կարելի հասկացնել նրան. տնից գուրս անելու համար էլ իր ուժը չի հասնիլ: Լա, գուրս արեց, թոող ի՛նչ անի. ո՞վ պէտք է իրան հաց-կերակուր պատրաստի, ո՞վ տունը պահի, իրան ա երեխանց նախ. տան պահտներն հողայ, մանուսնոց որ ուրիշը առնելու համար ոչ իրաւունք կայ, ոչ էլ այնքան փող ա՛նի: Հաղիւ-հաղ, ո՞վ գիտէ ի՛նչ նեղութիւններով, նրա ծնայներին աղաղակ է այդ մէկն էլ ձեռք բերել, ուր մնայ, թէ հիմա դրան էլ գուրս տնի, ուրիշը տուն բերէ, այն էլ այնպիսի գժուար տեղում, ուր կի՛նն առնելը բացի դրամական մեծ գոհացութիւններից, ահալին գժուարութիւնների հետ է կապուած: Ճար չը կայ. մնում է լսել ու հաշտուել: Ջատ էլ շատ բան կտան. ի՛նչ պէտք է տկանի կոխել ամեն լսածին, միւս կնոջ վրայ չեն խօսում, որ իր կնոջ վրայ չը խօսեն: Այ իրաւ, այդանասկ գէպքում խեղճ մարդու ամենամեծ մխիթարանքը հէ՛նց այն հանգամանքն է, որ այդ բամբասանքի տակ են շատ շատերը իր հարևանների կանանցից: Դոյնողիսի գրայներ պոտոււմ են իւ տղամարդկանց վրայ: Բարբերի աթ կամ այն չափով ապականութիւն նկատոււմ է ամեն տեղ համընդհանրի մօտ, թէև աչ նախ բացարձակ ու մեծ չափով, ինչպէս Չէրնոօրի վիճակում:

Ինչպէս տեսնում ենք, բոլոր պատճառներն էլ համարեա վատ տնտեսական են: Երկրորդական պատճառների մէջ կարելի է բնութենէլ երկրի դիրքը. ամբողջապէս անտատա. չորս կողմը խիտ, անմատչելի ու մութ անտառները ի՛նչ խօսք որ

արագէս՝ թէ այնպէս նպատակ ունի ալ և ալ կապերի հաստատութեան:

Մի մեծ պատճառ էլ կայ, որ եւ մտաշալ քիչելու, այդ նրանց՝ տղաներին փոքր հասակից պահելու սովորութիւնն է, մատաւարապէս 16—18 տարեկան հասակից: Այդ սովորութիւնը զուցէ այնքան վատ հետեւանք չունենար, եթէ միայն աղջիկն էլ տղի համեմատ հասակ ունենար, մինչդեռ աւելի հակառակն է նկատուի. սովորաբար աղջիկը կամ բոլորովին հասակակից է լինում և կամ մի քիչ մեծ, որ արագէս թէ այնպէս դարձեալ բնական չէ, քանի որ մինչդեռ աղջիկը արբանքին հասած, ֆիզիկապէս կատարեալ զարկացման մէջ է, տղան փոքր է լինում նրա համեմատ և կարօտ դեռ ևս մի-երկու տարուայ անելութեան:

Քարքերի ազականութիւն նկատուի է միայն ամուսնացած կանանց շրջանում. ջահել աղջիկների մէջ այդ տեսակ ոչ մի բան չըկայ: Նրանց փախցնում են, կամ աւելի ճիշտը՝ իրանք փախում են իրանց ազած երիտասարդի հետ, որովհետեւ եթէ աղջկայ յոծարութիւնը չը լինի, շատ դժուար կը լինի նրանց փախցնել: Այդ տեսակ գէպքեր շատ են պատահում նրանց մօտ: Սկզբում փախչող աղջկայ ծնողները մերժում են համաձայնութիւնը տալու, լին հաշտուում այդ բանի հետ, համարելով իրանց օջախի համար անպատուութիւն, բայց վերջիվերջոյ բոլոր փախչողներն էլ պատկուծ են:

Ինչպէս ամեն տեղ ժողովրդի մէջ, նախպէս և համընդհանրի մօտ՝ սիրահարութեան վրայ վատ աչքով են նայում, ընդունելով այն իբրեւ անպատիւ ու անբարոյական երևոյթ: Բայց ծնողների այդ հին հատկացողութեան հետ չի հաշտուում նրանց երիտասարդ աղջիկը կամ որդին, որ յանգուզն ու համարձակ, իր ընտրածի հետ մութ գիշերով սարեր-ձորեր է անցնում խիտ-խիտ անառտների միջով, մինչև կը տանի նրան մօտիկ գիւղը, քահանայի մօտ, որ կարն հարցափորձից յետոյ անմիջապէս ձեռք կառնի Մաշտոցը և կսկսի օրհնել նրանց միութիւնը: Իսկական սիրահարութեան գէպքեր շատ հազուադէպ են նրանց մօտ, և իսկապէս աղջիկը մի վրայ պիտի սիրահարուի, քանի

որ զիւգում էլ երկասարդ չի մնում. 16 տարեկանից արդէն տղաներին պահում են. հօ երեխաներին չի կարող սիրել:

Փախչելը միայն սիրահարութիւնից չի լինում. երբեմն տղջիկը փախչում է հէնց այնպէս, տեսնելով որ իրան շատ երկար են պահում տանը և զեռ էլի միտք չունին տալու, կամ իր չը հաւանածին են ուզում տալ, կամ թէ չէ տղի կողմից հալոսներ խելքից հանած կը լինեն, հեռուանց հեռու զովելով տղին և նախատելով աղջկան արդքան երկար համբերելու համար: Այս վերջին տեսակ դէպքեր շատ են պատահում: Տղի տէրը երբ տեսնում է որ ամեն կողմից ճարք կտրւում է, որ տեղից ուզեց՝ չը տուին, զիմում է իր ըստեղծ հարսների օգնութեան, խնդրելով անպատճառ իր մտքի դրածին կամ մի օրիշի մի տեղից թոցնել: Այդ արդէն նրանց համար դժուար չէ: Գէտ-գէն են բնկնում, առաջ հեռուից աղջկան լուրեր են գրկում, տղին զովելով գովում, վերջապէս իրանք սկսում են մատնալ և մի գեղեցիկ որ նրանցից մէկը եկեղեցուց կամ ուղղակի տնից աղջկան առնում, տանում է նրան սպասող տղին յամենում, ինքը հեռանում: Այնուհետև նրանք երկուսը միասին, ծածուկ, զիշերով ճանապարհ են ըննում գէպի մօտիկ զիւղը, աշխատելով սարերի ու անմատչելի գաղաթների վրայից անցնելով, հասնել քաւանայի տունը, ուր վերջնականապէս հանդիստ են դառնում և իրանց նպատակին հասնում:

Երբեմն մի աղքատ տղի համար, տեսնելով որ ոչ ոք աղջիկ չի տալիս, ոչ զիւղը կանգնում է. ժողովում են կտրինները և մի զիշեր վրայ տալիս մի աղջկայ տունը, պարտադ հրացանի ու ստրճանակի ձայներով ստրստիեցնում տնեցոյ և աղջկան դուրս հանում, փախցնում, տանում տղի հետ գոտակի տալիս: Այս արդ տեսակ դէպքեր անցնում են անպատիւ և առանց օրեւ ծանր հետեւանքի:

— Եւ այդ ամէն ինչ ինչպէս կատարւում է:

— Եւ այդպէս:

— Եւ այդպէս էլ միշտ ծառայում է ինչպէս ասեցիք:

— Եւ այդպէս զո մէկ միտքը ամենից տանելով:

— Եւ այդպէս զիմն հասնում: